Հաստատում եմ
Ախթալայի N 1 մ/դ
տնօրեն՝ _____ (Հ. Ալիխանյան)
(ստորագրություն)
13.09.2023թ.

Դասվարի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան
IV դասարան

Դասվար՝ Հ. Ալիխանյան

2023-2024 ուստարի

IV դասարանի ծնողկոմիտեի կազմը՝
Նախագահ՝ Շահբազյան Տաթև
Անդամներ՝ Զուրաբյան Մարգաիտա
Աբգարյան Ծովինար

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները Դասարանի ընդհանուր բնութագիրը:

Չորրորդ դասարանում սովորում է 12 աշակերտ՝ 4 տղա, 8 աղջիկ: Դասարանում կան տարբեր ընդունակություններ ունեցող, դաստիարակչական տարբեր մոտեցումներ պահանջող սովորողներ: Դասարանում դժվար դաստիարակվող կամ վարքային խնդիրներ ունեցող երեխա չկա:
Դասարանի երեխաները շփվող են, շարժուն, պատրաստ են օգնել,աջակցել միմյանց, չկան լուրջ միջանձնային խնդիրներ : Աշակերտները դժվար են կենտրոնացնում ուշադրությունը , որոշ աշակերտների մոտ բացակայում է աշխատասիրությունը: Ուստի իմ առջև նպատակ եմ դնում ուսումնական տարվա ընթացքում բարձրացնել աշակերտների առաջադիմության ցուցանիշը, ձևավորել գիտելիքի կարևորության գիտակցում:

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական

աշխատանքները:

. հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը

. հրավիրել ծնողական ժողովներ

. ծնողների հետ տարվող աշխատանքներ

. աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ և հմտություններ

- **Հայեցի դաստիարակություն** - Կազմակերպել զրույցներ հայկական տոների, սովորույթների մասին, տանել բացատրական աշխատանքներ:

- **Ռազմահայրենասիրական դաստիարակություն** -Անցկացնել զրույցներ Հայաստանի անցյալի, հայ ժողովրդի համառ պայքարի ու սխրանքների մասին, ծանոթացնել հայ ազատամարտիկների հերոսական կյանքին, պատմել հայոց բանակի կազմավորման և կարևորության մասին:

- **Գեղագիտական դաստիարակություն** - Դաստիարակել գեղեցիկը տեսնելու, զգալու, ընկալելու ունակությունը, այն վերածել կարողության, ապա հմտության:

  Ուշադրություն դարձնել անձնական հիգիենային, պահանջել, որ լինեն կոկիկ, գեղեցիկ սանրված, հագուստը մաքուր, եղունգները կտրած, ձեռքերը միշտ մաքուր: Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ (նպատակը՝ ճանաչել բնությունը, միջավայրում ճիշտ պահվածք դրսևորել) :

- **Ֆիզիկական դաստիարակություն** - Ճիշտ կեցվածքի ձևավորման համար հարկավոր է զբաղվել սպորտով, առավոտյան կատարել մարմնամարզական վարժություններ: Հաճախակի կազմակերպել սպորտային միջոցառումներ, մրցույթներ:

- **Աշխատանքային դաստիարակություն** - Մարդն իր նպատակին հասնելու համար պետք է աշխատասեր լինի, քանի որ ծուլությամբ ոչնչի չես հասնի: Յուրաքանչյուր բարիք աշխատանքի արդյունք է, հետևաբար նրանց մեջ պետք է

սերմանել աշխատասիրություն:

- **Բնապահպանական դաստիարակություն** -Կազմակերպել էքսկուրսիաներ տարվա տարբեր եղանակներին, ծանոթացնել բնության զարմանահրաշ երևույթներին:

  Բնությունը մաքրում է օդը, մեզ բերք ու բարիք է տալիս, ուստի այն պետք է պահել ու պահպանել:

- **Դպրոց-ընտանիք կապ** - Անժխտելի է դպրոց- ընտանիք կապի անհրաժեշտությունը : Միայն սերտ համագործակցության շնորհիվ կարելի է հասնել ցանկալի արդյունքի: Այս կապը պետք է ամուր և նպատակային լինի, որը կիրականացվի ծնողական ժողովների միջոցով: Ծնողներին պետք է իրազեկել երեխաների ձեռքբերումների և բացթողումների մասին, անհրաժեշտության դեպքում տալ ցուցումներ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն **Առաջին կիսամյակ -15 շաբաթ**
1-ին	«Մենք ընկերներ ենք» - նպատակ՝ աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողականության գաղափարը
2-րդ	**«Գիտելիքն ուժ է »** թեմայով զրույց- նպատակ՝ ձևավորել բազմակարծություն և աշխարհահայացք
3-րդ	**«Պետական խորհրդանիշներ»** թեմայով զրույց-նպատակ՝ աշակերտներին ներկայացնել մեր հայրենիքի ծագման և ձևավորման ուղին:
4-րդ	**«Ես էլ քեզ նման եմ »** թեմայով զրույց –նպատակ՝ ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:
5-րդ	**«Կարողությունների հստակեցում »** - թերթիկի միջոցով հստակեցնել, թե որ կարողություններն են ավելի զարգացած:

6-րդ	**« Բնական պաշարներ-մեր մայր բնություն »** թեմայով քննարկում-նպատակ՝ ձևավորել գիտելիքներ բնության, բնական պաշարների վերաբերյալ:
7-րդ	**«Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում»** - նպատակ՝ պարզաբանել սովորողների իրավունքները և պարտականությունները դպրոցում:
8-րդ	**Գեղագիտական դաստիարակություն** ՝ **«** Աշունն իմ պատուհանից»
9-րդ	**« Բնապահպանական հիմնախնդիրներ՝** ձևավորել գիտելիքներ բնության պահպանության և նա պաշարների խելամիտ օգտագործման անհրաժեշտության վերաբերյալ:
10-րդ	**«Գնահատիր ինքդ քեզ »-** նպատակը՝ ձևավորել արժեհամակարգ, կարողանալ կատարել ինքնավերլուծություն:
11-րդ	**«Կարող եմ օգտակար լինել »** - նպատակը՝ ձևավորել բարի և դրական հատկանիշներ:
12-րդ	**«Ես ուզում եմ դառնալ»**-նպատակը՝ մասնագիտական կողմնորոշում:
13-րդ	Մասնագիտական կողմնորոշման նպատակով այց որևէ հիմնարկ:
14-րդ	**« Բնական աղետներ »** - նպատակ՝ ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները , դրանց հետևանքները, դրանցից պաշտպանվելու միջոցները:
15-րդ	**«Ես այս տարվա ընթացքում կարողացա...»-**ինքնագնահատման թերթիկ:Տարեվերջյան ինքնագնահատում:
	Երկրորդ կիսամյակ -19 շաբաթ
1-ին	**«Ազգային և պետական տոներ »-** նպատակ՝ հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները, պետական տոների կարևորությունը:
2-րդ	**«Եկեղեցին և ազգը»**-նպատակ՝ քննարկման միջոցով հիմնավորել եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում:
3-րդ	**«Մենք բոլորս զինվորներ ենք »**- քննարկում և վերլուծություն:
4-րդ	**«Բարեկամներ և թշնամիներ»** -նպատակ՝ ռազմահայրենասիրական դաստիարակություն:
5-րդ	**«Մաքուր պահենք շրջապատը »**-նպատակը՝ օգնել սովորողներին գիտակցելո աղբի և թափոնների վնասակար ազդեցությանը բնության և մարդու առողջության վրա:
6-րդ	**«Ես կարող եմ, դու կարող ես»**-նպատակ՝ աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական և հոգատար վերաբերմունք հատուկ կարիքավոր մարդկանց նկատմամբ:

7-րդ	**«Ապագայի ծառը »** -նպատակ՝ խթանել նպատակներ ունենալու, դրանց հասնելու համար գործողությունների պլան մշակելու,վերլուծելու, պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները:
8-րդ	**« Գնահատվող մրցույթ »**-նպատակ՝ աշակերտները կզարգացնեն և կստուգեն իրենց գիտելիքները որևէ թեմայի վերաբերյալ, կկարողանան աշխատել և համագործակցել խմբում:
9-րդ	**«Պատասխանատու քաղաքացի »**-խաղ, նպատակ՝ կիմանան, թե ինչպիսին պետք է լինի քաղաքացին:
10-րդ	**«Հայ ժողովրդի անցած ուղին »** -նպատակ՝ սերմանել հայրենասիրություն:
11-րդ	**«Ես Հայկի թոռն եմ»**- նպատակ՝ ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին, ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ:
12-րդ	**«Ասացվածքի գանձարան»** -նպատակ՝ աշակերտներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսությանը, զարգացնել բարոյական արժեքներ :
13-րդ	**«Աշխատակից ենք ընտրում»**- նպատակ մասնագիտական կողմնորոշում:
14-րդ	**«Իմ փոքրիկ մոլորակը»**–նկարչական մրցույթ:
15-րդ	**«Ամենից լավ տունը»**-նպատակ՝ հայրենասիրական դաստիարակություն:
16-րդ	**«Ես երազում եմ»**-ստեղծագործական զրույց:
17-րդ	**«Ես մարզիկ եմ»**-սպորտային մրցույթ:
18-րդ	**«Փոքրիկ պատմություններ անհատի և հասարակության խնդիրների մասին »**-ընթերցանություն . նպատակ՝ աշակերտներին տեղեկացնել, թե ինչպես է մարդն ազդում հասարակության վրա :
19-րդ	**« Այս ուսումնական տարին ինձ տվեց. . . »** -գնահատման ինքնավերլուծական թերթիկ: